# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

## N ՀՀՌ-ԳՀԾՁԲ-26/04

ք. Երևան «15» ապրիլ 2026թ.

«Հայաստանի հանրային ռադիոընկերություն ՓԲԸ»-ն, ի դեմս գործադիր տնօրեն Արմեն Քոլոյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<ՆԱՄՄԱ>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա.Հովսեփյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին։

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է սարքավորումների վարձակալության ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներում:[1]

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.[2]

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին։

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

---

[1] *Եթե գնման առարկա է հանդիսանում շինարարական ծրագրերի կատարման նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցումը, ապա «մատուցվում է» բառից հետո լրացվում է «քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերին և» բառերը*

[2] *Եթե գնման առարկա է հանդիսանում շինարարական ծրագրերի կատարման նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցումը, ապա 2.1.2 կետի «ա» պարբերությունը շարադրվում է հետևյալ խմբագրությամբ. «Չընդունել ծառայությունը և սահմանել ողջամիտ ժամկետ ոչ պատշաճ ծառայությունը պայմանագրով նախատեսված պահանջներին համապատասխան (անհատույց) պատշաճ մատուցելու և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքն ու 5.3 կետով նախատեսված տույժը»*

* *լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:*

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4:[3]

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:[4]

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և Պատվիրատուն պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը

---

[3] *Հանվում է պայմանագրից, եթե մատուցվելիք ծառայությունը չի վերաբերում շինարարական ծրագրերի կատարման համար անհրաժեշտ նախագծային փաստաթղթերի քաղաքաշինական փորձաքննության իրականացմանը:*

[4] *Եթե գնման առարկա է հանդիսանում շինարարական ծրագրերի կատարման նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցումը, ապա պայմանագրի նախագծի 3.1 կետը 2-րդ նախադասությունից հետո լրացվում է հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ, «Ընդ որում սույն պայմանագրի շրջանակներում մատուցված և Պատվիրատուին ներկայացված ծառայության արդյունքի ընդունումն իրականացվում է, եթե Կատարողը ամբողջությամբ՝ ամենօրյա ռեժիմով ապահովել է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջները այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպմանը, կահավորմանը , տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումները) նորմերը և Պատվիրատուին ներկայացրել գրավոր հավաստում՝ ամենօրյա ռեժիմով կապալառուի կողմից շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման, կահավորման և տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումները) նորմերը պահպանած կամ չպահպանված լինելու վերաբերյալ:Ընդ որում հավաստման մեջ մանրամասն ներկայացվում են կանոնները և/կամ նորմերը չպահպանելու փաստը հավաստող հիմքերը:»:*

կտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-դունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 7 600 000 ( յոթ միլիոն վեց հարյուր հազար ) ՀՀ դրամ:[5]

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.1.1:[6]

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում գնման դիմաց վճարումն իրականացվում է սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:[7]

4.3[8]

## 2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[9] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:[10]

---

*[5] Եթե Կատարողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

*[6] Կատարողը կարող է հրաժարվել առաջարկված կանխավճարից կամ դրա մի մասից: Ընդ որում կնքվելիք պայմանագրում կանխավճարը սահմանվում է Պատվիրատուի և Կատարողի միջև համաձայնեցված չափով: Եթե պայմանագրով չի նախատեսվում կանխավճարի հատկացում, ապա սույն կետը հանվում է նախագծից:*

*[7] Գանձապետարանում հաշիվներ չունեցող պատվիրատուների դեպքում սույն կետի վերջին պարբերությունը խմբագրվում է հետևյալ բովանդակությամբ. «Ընդ որում գնման դիմաց վճարումն իրականացվում է սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:»*

*[8] Պարբերությունը հանվում է, եթե ծառայությունը չի վերաբերում ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգմանը:*

*[9] Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է սպանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

*Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:*

*[10] Եթե գնման առարկա է հանդիսանում շինարարական ծրագրերի կատարման նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցումը, ապա պայմանագրի նախագծը լրացվում է հետևյալ բովանդակությամբ 5.5.1 կետով. «5.5.1 Սույն պայմանագրով նախատեսված*

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների, ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[11]

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

---

*ծառայությունների մատուցման ողջ ընթացքում քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջների, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման,կահավորման, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումների) նորմերի չպահպանման, ինչպես նաև սույն պայմանագրի 3.1 կետում նշված գրավոր հավաստումը չպրամադրելու համար Կատարողի նկատմամբ կիրառվում է պատասխանատվության հետևյալ միջոցները.*

| N | Խախտումը | Պատասխանատվությունը |
|---|---|---|
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |

*…» իսկ 5.4 կետում «5.2 և 5.3 » թվերը փոխարինվում են «5.2,5.3 և 5.5.1» թվերով:*

[11] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս պահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը[12]

7.13 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.14 Սույն պայմանագիրը կազմված է _____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

---

[12] *Եթե Պատվիրատուն հանդիսանում է գանձապետարանում հաշիվ չունեցող պատվիրատու, ապա սույն կետը խմբագրվում է՝«վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու» բառերը փոխարինելով «բանկին վճարման հանձնարարական տալու» բառերով:*

7.15 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:
7.16:[13]

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| Հայաստանի հանրային ռադիոընկերություն ՓԲԸ<br>ՀՎՀՀ 01541435<br>ք. Երևան, Ալեք Մանուկյան 5<br>Ֆասթ Բանկ ՓԲԸ<br>h/h 2620677354861001<br>Գործադիր տնօրեն Արմեն Քոլոյան | <<ՆԱՄԱ>> ՍՊԸ<br>ք.Երևան, Չեռնիշևսկի 60<br>«Էվոկաբանկ» ԲԲԸ<br>Հ/Հ` 1660030202690800<br>ՀՎՀՀ` 01055401<br>Տնօրեն` Ա. Հովհաննիսյան |
| ----------------------------------<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. | ----------------------------------<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. |

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

---

[13] Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագրի գինը չի գերազանցում գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա սույն կետը խմբագրվում է՝ վերջինից հանելով 4-րդ նախադասությունը, իսկ 5-րդ նախադասությունը խմբագրվում է՝ «, իսկ լուծանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները» բառերը փոխարինելով «և» բառով: Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:
Սույն կետի 5-րդ նախադասության մեջ սահմանվող ժամկետը չի կարող պակաս լինել 10 աշխատանքային օրից:

*Հավելված N 1*
*« 15 » ապրիլ 2026 թ. կնքված*
*ՀՀՌ-ԳՀԾՁԲ-26/04 ծածկագրով պայմանագրի*

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | մատուցման | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը` ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | հասցեն | Ժամկետը** |
| 1 | 92151300/4 | ստորև | դրամ | 1 710 000 | 1 | ք.Սպիտակ, Սուրեն Ավետիսյան 1 և ք.Ստե փանավան, Գարեգին Նժդեհի 5 | 2026թ. հունիսի 2 և հունիսի 9 |
| 2 | 92151300/5 | ստորև | դրամ | 2 470 000 | 1 | ք.Մեղրի,Աղեյան 3 և ք.Սիսիան, Սիսական 44 ա | 2026թ. հունիսի 13 և հունիսի 14 |
| 3 | 92151300/6 | ստորև | դրամ | 1 710 000 | 1 | ք. Բերդ,Մաշտոցի 82 և ք.Վարդենիս, Ռոմանի 8 | 2026թ. հունիսի 19 և հունիսի 20 |
| 4 | 92151300/7 | ստորև | դրամ | 1 710 000 | 1 | ք.Բերդավան, փողոց 2, շենք 1 և ք. Մարտունի, Մյասնիկյան 23 | 2026թ. հունիսի 26 և հունիսի 27 |

## Տեխնիկական բնութագիր

**Չափաբաժին 1**

2026 թվականի հունիսի 2–ին ժամը 18–00,ք.Սպիտակ, Սուրեն Ավետիսյան 1 հասցեում գտնվող Սպիտակ համայնքի Մշակույթի պալատում և 2026 թվականի հունիսի 9–ին ժամը 18–00, ք.Ստեփանավան, Գարեգին Նժդեհի 5 հասցեում գտնվող Ստեփանավան համայնքի Մշակույթի պալատում Հայկական Ռադիոյի 100 ամյակին նվիրված միջոցառումների շրջանակում կայանալիք Հանրային Ռադիոյի <<Արևիկ մանկապատանեկան անսամբլի>> համերգների համար անհրաժեշտ հնչյունային և հարակից տեխնիկայի վարձակալում: Ծառայությունն իր մեջ ներառում է նաև վարձակալվող տեխնիկայի տեղափոխում ք.Սպիտակ, Սուրեն Ավետիսյան 1 հասցեում գտնվող Սպիտակ համայնքի Մշակույթի պալատի բեմ և ք.Ստեփանավան, Գարեգին Նժդեհի 5 հասցեում գտնվող Ստեփանավան համայնքի Մշակույթի պալատի բեմ: Տեխնիկան անհրաժեշտ է Սպիտակ համայնքի Մշակույթի պալատի համերգասրահ մատակարարել 02.06.2026 ժամը 10:00 ից ոչ ուշ և Ստեփանավան համայնքի Մշակույթի պալատի համերգասրահ մատակարարել 09.06.2026 ժամը 10:00 ից ոչ ուշ : Մատակարարի տեխնիկական անձնակազմը պետք է կազմված լինի առնվազն 3 տեխնիկական աշխատակցից, որոնք պարտավոր են Հանրային Ռադիոյի տեխնիկական մասնագետների ղեկավարությամբ իրականացնել հնչյունային սարքավորումների և հարակից պարագաների մոնտաժային և տեղադրման աշխատանքները համաձայն նախապես տրամադրված նախագծի (set up) և իրականացնել փորձ–ստուգման(soundcheck) աշխատանքներ: Մատակարարը պատասխանատվություն է կրում տեխնիկայի անխափան աշխատանքի և սարքինության համար: Հնչյունային և հարակից տեխնիկայի մոնտաժային աշխատանքները պետք է ավարտվեն մինչև մատակարարվող օրվա ժամը 13:00: Վարձակալվող տեխնիկայի ապամոնտաժման աշխատանքները մատակարարի կողմից կարող են կատարվել վերը նշված համերգների ավարտից հետո: Ստորև ներկայացվում է անհրաժեշտ վարձակալվող հնչյունային տեխնիկայի ցանկը Հանրային Ռադիոյի Արևիկ մանկապատանեկան անսամբլի կողմից իրականացվող առնվազն 2 ժամ տևողությամբ 2 համերգային ծրագրերի իրականացման համար:

յուրաքանչյուր համերգի համար անհրաժեշտ հնչյունային սարքավորումների համակարգ,ցանկ

Տվյալ համակարգը և ցանկը մշակվել և կազմվել է հաշվի առնելով Հանրային Ռադիոյի «Արևիկ»մանկապատանեկան անսամբլի կազմի և դասավորվածության առանձնահատկությունները, Սպիտակ համայնքի Մշակույթի պալատի և Ստեփանավան համայնքի Մշակույթի պալատի համերգասրահների ակուստիկ յուրահատկությունները:

Ձայնային ուժեղացման համակարգը նախատեսված է ապահովելու կենդանի երաժշտության բարձրորակ վերարտադրում, հավասար ձայնային ծածկույթ ամբողջ հանդիսատեսի տիրույթով, ցածր աղավաղում և բարձր դինամիկ միջակայք:

Համակարգը պետք է ապահովի հանդիսատեսի տարածքում՝ առնվազն 95 dBa SPL շարունակական մակարդակ, առնվազն 105 dBa SPL պիկ մակարդակ:
Համակարգը պետք է ունենա առնվազն 10 dBa դինամիկ պահեստային միջակայք(headroom ): Գլխավոր բարձրախոսները պետք է ունենան նվազագույն ճնշման հնարավորություն՝ 135 dBa SPL պիկ մակարդակ – 1W/1m:

Համերգը պատշաճ մակարդակով անցկացնելու համար անհրաժեշտ է ապահովել պրոֆեսիոնալ, որակյալ հնչյունային բարձրախոսների, սաբվուֆերների և մոնիտորների համակարգեր, ինչպիսիք են Meyer Sound, D&B, L´Acoustic, Adamson Systems, JBL, RCF կամ դրանց համարժեք որակի արտադրողների բարձրախոսների համակարգերը:

Գլխավոր բարձրախոսային համակարգ(main speakers)

Համակարգը պետք է լինի. ստերեո (Left / Right) կոնֆիգուրացիայով
նախատեսված 500–600 հանդիսատես ունեցող փակ տարածքների համար:

Բաղկացած բարձր և ցածր հաճախականության բարձրախոսներից: Ցածր հաճախականության բարձրախոսը LINE ARRAY դեպքում առնվազն–8",POINT SOURCE դեպքում–առնվազն 12": Հաճախականության հնարավորությունը 60 - 18000 HZ ± 3dBa: Առավելագույն ձայնային ճնշումը ոչ պակաս 135dba SPL - 1m:

Սաբվուֆերների համակարգ(Subwoofer)
Համակարգը պետք է կազմված լինի ցածր հաճախականությամբ բարձրախոսներից– առնվազն 15": Ամեն կողմում առնվազն 5 kW: Հաճախականության հնարավորությունը 30-80HZ:

Հնչյունային Մոնիտորներ (կատարողների համար նախատեսված բարձրախոսներ)

Բեմին դրվող մոնիտորներ–10 հատ: 500–700W հզորությամբ, առնվազն 12",ձայնի ճնշում առնվազն 120dBa: Հաճախականության հնարավորությունը 60 - 18000 HZ ± 3dBa:
Կառավարող վահանակի համակարգ (Digital Console)–1 հատ
Թվային 32 մուտք - 16 ելք 96khz:
Stagebox 32 մուտք 16 ելք, առնվազն 50 մետր

Խոսափողի հենակ
Մեծ (long boom)-14 հատ

Խոսափողներ
1.Անլար դինամիկ կապսուլով, սուպերկարդիոիդ խոսափողներ երգիչների համար 50-16000hg (500-600hz RF), 30m և ավելի անխափան կապի միջակայք ապահովող–14 հատ
2. Լարով դինամիկ խոսափողներ երգիչների համար 40-15000hg, 56dbV/Pa 1kHz, Max SPL 160db - 1000hg, 3 pin XLR ելքով–10 հատ

Անլար խոսափողները պետք է ապահովված լինեն որակյալ, երկար աշխատանք ապահովող մարտկոցներով

Դյուրակիր համակարգիչ կառավարող վահանակին միանալու հնարավորությամբ,երաժշտություն միացնելու համար–1 հատ:

**Հավելված 2**

2026 թվականի հունիսի 13-ին ժամը 17–00 ,ք.Մեղրի,Աղեյան 3 հասցեում գտնվող Մեղրի համայնքի Մշակույթի տանը և 2026 թվականի հունիսի 14–ին ժամը 18–00, ք.Սիսիան, Սիսական 44 ա հասցեում գտնվող Սիսիան համայնքի Մշակույթի կենտրոնում Հայկական Ռադիոյի 100 ամյակին նվիրված միջոցառումների շրջանակում կայանալիք էստրադային սիմֆոնիկ նվագախմբի համերգների համար անհրաժեշտ հնչյունային և հարակից տեխնիկայի վարձակալում: Ծառայությունն իր մեջ ներառում է նաև վարձակալվող տեխնիկայի տեղափոխում ք. Մեղրի,Աղեյան 3 հասցեում գտնվող Մեղրի համայնքի Մշակույթի տան բեմ և ք.Սիսիան, Սիսական 44 ա հասցեում գտնվող Սիսիան համայնքի Մշակույթի կենրոնի բեմ : Տեխնիկան անհրաժեշտ է Մեղրի համայնքի Մշակույթի տան համերգասրահ մատակարարել 13.06.2026 ժամը 09:00 ից ոչ ուշ և Սիսիան համայնքի Մշակույթի տան համերգասրահ մատակարարել 14.06.2026 ժամը 10:00 ից ոչ ուշ : Մատակարարի տեխնիկական անձնակազմը պետք է կազմված լինի առնվազն 3 տեխնիկական աշխատակցից, որոնք պարտավոր են Հանրային Ռադիոյի տեխնիկական մասնագետների ղեկավարությամբ իրականացնել հնչյունային սարքավորումների և հարակից պարագաների մոնտաժային և տեղադրման աշխատանքներ, համաձայն նախապես տրամադրված նախագծի (set up) և իրականացնել փորձ–ստուգման(soundcheck) աշխատանքներ: Մատակարարը պատասխանատվություն է կրում տեխնիկայի անխափան աշխատանքի և սարքինության համար: Հունիսի 13-ին մատակարարվող հնչյունային և հարակից տեխնիկայի մոնտաժային աշխատանքները պետք է ավարտվեն ժամը 12:00-ին, իսկ հունիսի 14–ին մատակարարվող հնչյունային և հարակից տեխնիկայի մոնտաժային աշխատանքները պետք է ավարտվեն ժամը 13:00-ին: Վարձակալվող տեխնիկայի ապամոնտաժման աշխատանքները մատակարարի կողմից կարող են կատարվել վերը նշված համերգների ավարտից հետո: Ստորև ներկայացվում է անհրաժեշտ վարձակալվող հնչյունային տեխնիկայի ցանկը Հանրային Ռադիոյի էստրադային–սիմֆոնիկ նվագախմբի կողմից իրականացվող առնվազն 2 ժամ տևողությամբ 2 համերգային ծրագրերի իրականացման համար:

Յուրաքանչյուր համերգի համար անհրաժեշտ հնչյունային սարքավորումների համակարգ,ցանկ

Տվյալ համակարգը և ցանկը մշակվել և կազմվել է հաշվի առնելով ՀՌ էստրադային–սիմֆոնիկ նվագախմբի կազմի և դասավորվածության առանձնահատկությունները,Մեղրի համայնքի Մշակույթի տան և Սիսիան համայնքի Մշակույթի կոնտրոնի համերգասրահների ակուստիկ յուրահատկությունները:

Հնչյունային ուժեղացման համակարգը նախատեսված է ապահովելու կենդանի երաժշտության բարձրորակ վերարտադրում, հավասար ձայնային ծածկույթ ամբողջ հանդիսատեսի տիրույթը, ցածր աղավաղում և բարձր դինամիկ միջակայք:
Համակարգը պետք է ապահովի հանդիսատեսի տարածքում՝ առնվազն 95 dBa SPL շարունակական մակարդակ, առնվազն 105 dBa SPL պիկ մակարդակ:
Համակարգը պետք է ունենա առնվազն 10 dBa դինամիկ պահեստային միջակայք(headroom): Գլխավոր բարձրախոսները պետք է ունենան նվազագույն ճնշման հնարավորություն՝ 135 dBa SPL պիկ մակարդակ – 1W/1m:

Համերգը պատշաճ մակարդակով անցկացնելու համար անհրաժեշտ է ապահովել պրոֆեսիոնալ,որակյալ հնչյունային բարձրախոսների ,սաբվուֆերների և մոնիտորների համակարգեր, ինչպիսիք են Meyer Sound, D&B, L´Acoustic, Adamson Systems, JBL,RCF կամ դրանց համարժեք որակի արտադրողների բարձրախոսների համակարգերը:
Գլխավոր բարձրախոսային համակարգ(main speakers)

Համակարգը պետք է լինի. ստերեո (Left / Right) կոնֆիգուրացիայով
նախատեսված 500–600 հանդիսատես ունեցող փակ տարածքների համար:

Բաղկացած բարձր և ցածր հաճախականության բարձրախոսներից: Ցածր հաճախականության բարձրախոսը LINE ARRAY դեպքում առնվազն–8",POINT SOURCE դեպքում– առնվազն 12": Հաճախականության հնարավորությունը 60 - 18000 HZ ± 3dBa: Առավելագույն ձայնային ճնշումը ոչ պակաս 135dba SPL - 1m:

Սաբվուֆերների համակարգ(Subwoofer)
Համակարգը պետք է կազմված լինի ցածր հաճախականությամբ բարձրախոսներից– առնվազն 15": Ամեն կողմում առնվազն 5 kW: Հաճախականության հնարավորությունը 30-80HZ:

Հնչյունային Մոնիտորներ (կատարողների համար նախատեսված բարձրախոսներ)

Բեմին դրվող մոնիտորներ–10հատ: 500–700W հզորությամբ, առնվազն 12", ձայնի ճնշում առնվազն 120dBa: Հաճախականության հնարավորությունը 60 - 18000 HZ ± 3dBa:

Կառավարող վահանակի համակարգ (Digital Console)–1 հատ
Թվային 48 մուտք - 32 ելք, 96khz
Stagebox 48 մուտք 16 ելք, առնվազն 50 մետր:

Խոսափողի հենակ
փոքր(short boom)–5 հատ,մեծ (long boom)-30 հատ
Նոտայի հենակ լույսով 20 հատ

Խոսափողներ

1.Խոսափողներ հարվածային գործիքների համար 1 (մեկ) կոմպլեկտ(10 մասից բաղկացած)
Kick out,Kick Boundry,Snare Top,Snare Bottom, Hi Hat, Tom-3,Overheads-2
2.Երաժշտական գործիքների համար դինամիկ խոսափողներ 40-15000HZ, 56dbV/Pa 1kHz, MAX SPL 160db - 1000hg, 3 pin XLR ելքով-13 հատ

3.Լարային գործիքների համար կոնդենսատորային փոքր դիագրամով Խոսափողներ–10 հատ
20-20000 HZ ,MAX SPL 136db, 3 pin XLR ելքով

4. 4 հատ վոկալ խոսափողից բաղկացած միկրոֆոնների անլար համակարգ դինամիկ կապսուլով, սուպերկարդիոիդ, 50-16000HZ, (500-600hz RF), 30m և ավելի անխափան կապի միջակայք ապահովող:

Անլար խոսափողները պետք է ապահովված լինեն ոռակյալ, երկար աշխատանք ապահովող մարտկոցներով:

Բեքսթեյջ-հավելյալ սարքավորումներ

1.Հարվածային գործիքների հավաքածու–մեծ թմբուկ(kick), թմբուկ(snare), թմբուկ(tom)- փոքր–միջին–մեծ – 3 հատ, ծնծղա(Hi Hat)–1 հատ,ափսե(ride)-1 հատ, ափսե crash–1 հատ,համապատասխան աթոռ,ոտնակ
2.Բաս կիթառի ուժեղացուցիչ իրեն համապատասխան բարձրախոսով առնվազն 400W և առնվազն 10´´ տրամագծով –1 հատ

3.Էլեկտրական կիթառի ուժեղացուցիչ իրեն համապատասխան բարձրախոսով առնվազն 45W և 10" տրամագծով-1 հատ:

4.Ուղիղ միացման սարք–Di-Box -20dB PAD մետաղյա կաղապար, մուտք–1/4", ելք–3 pin XLR – 6 հատ

5. Պրոֆեսիոնալ անլար in-ear համակարգ, բնական և չընդհատվող ձայն ապահովելու հնարավորությամբ–1 հատ : Հավասար 20-20 000 HZ հաճախականության վերարտադրում, որը անխափան կարող է աշխատել փակ տարածությունում առնվազն 25մ հեռավորությամբ: Առնվազն 120dB դինամիկ միջակայքով: 450-650 MHZ RF միջակայքում, ելք–3pin XLR:

<u>Չափաբաժին 3</u>

2026 թվականի հունիսի 19–ին ժամը 19–00 , ք. Բերդ,Մաշտոցի 82 հասցում գտնվող Բերդ համայնքի Մշակույթի տանը և 2026 թվականի հունիսի 20–ին ժամը 18–00, ք.Վարդենիս, Ռոմանի 8 հասցեում գտնվող Վարդենիս համայնքի Մշակույթի պալատում Հայկական Ռադիոյի 100 ամյակին նվիրված միջոցառումների շրջանակում կայանալիք Հանրային Ռադիոյի Արամ Մերանգուլյանի անվան ժողովրդական գործիքների անսամբլի համերգների համար անհրաժեշտ հնչյունային և հարակից տեխնիկայի վարձակալում:Ծառայությունն իր մեջ ներառում է նաև վարձակալվող տեխնիկայի տեղափոխում ք.Բերդ, Մաշտոցի 82 հասցեում գտնվող Բերդ համայնքի Մշակույթի տան բեմ և ք.Վարդենիս, Ռոմանի 8 հասցեում գտնվող Վարդենիս համայնքի Մշակույթի պալատի բեմ

․խնիկան անհրաժեշտ է Բերդ համայնքի Մշակույթի տան համերգասրահ մատակարարել 19.06.2026 ժամը 10:00 ց ոչ ուշ և Վարդենիս համայնքի Մշակույթի պալատի համերգասրահ մատակարարել 20.06.2026 ժամը 10:00 ից ոչ ուշ : Մատակարարի տեխնիկական անձնակազմը պետք է կազմված լինի առնվազն 3 տեխնիկական աշխատակցից, որոնք պարտավոր է Հանրային Ռադիոյի տեխնիկական մասնագետների ղեկավարությամբ իրականացնել հնչյունային սարքավորումների և հարակից պարագաների մոնտաժային և տեղադրման աշխատանքներ համաձայն նախապես տրամադրված նախագծի(set up) և իրականացնել փորձ–ստուգման(soundcheck) աշխատանքներ: Մատակարարը պատասխանատվություն է կրում տեխնիկայի անխափան աշխատանքի և սարքինության համար: Մոնտաժային աշխատանքները պետք է ավարտվեն մինչև մատակարարվող օրվա ժամը 13:00: Վարձակալվող տեխնիկայի ապամոնտաժման աշխատանքները մատակարարի կողմից կարող են կատարվել վերը նշված համերգների ավարտից հետո:

Ստորև ներկայացվում է անհրաժեշտ վարձակալվող հնչյունային տեխնիկայի ցանկը Հանրային Ռադիոյի Ա. Մերանգուլյանի անվան ժողովրդական գործիքների վաստակավոր անսամբլի կողմից իրականացվող առնվազն 2 ժամ տևողությամբ 2 համերգային ծրագրերի իրականացման համար:

Յուրաքանչյուր համերգի համար անհրաժեշտ հնչյունային սարքավորումների համակարգ,ցանկ

Տվյալ համակարգը և ցանկը մշակվել և կազմվել է հաշվի առնելով Հանրային Ռադիոյի Ա․Մերանգուլյանի անվան ժողովրդական գործիքների վաստակավոր անսամբլի կազմի և դասավորվածության առանձնահատկությունները,Բերդ համայնքի Մշակույթի տան և Վարդենիս համայնքի Մշակույթի պալատի համերգասրահների ակուստիկ յուրահատկությունները:

Հնչյունային ուժեղացման համակարգը նախատեսված է ապահովելու կենդանի երաժշտության բարձրորակ վերարտադրում, հավասար ձայնային ծածկույթ ամբողջ հանդիսատեսի տիրույթը, ցածր աղավաղում և բարձր դինամիկ միջակայք:

Համակարգը պետք է ապահովի հանդիսատեսի տարածքում՝ առնվազն 95 dBa SPL շարունակական մակարդակ, առնվազն 105 dBa SPL պիկ մակարդակ:
Համակարգը պետք է ունենա առնվազն 10 dBa դինամիկ պահեստային միջակայք(headroom): Գլխավոր բարձրախոսները պետք է ունենան նվազագույն ճնշման հնարավորություն՝ 135 dBa SPL պիկ մակարդակ – 1W/1m:
Համերգը պատշաճ մակարդակով անցկացնելու համար անհրաժեշտ է ապահովել պրոֆեսիոնալ,որակյալ հնչյունային բարձրախոսների ,սաբվուֆերների և մոնիտորների համակարգեր, ինչպիսիք են Meyer Sound, D&B, L´Acoustic, Adamson Systems, JBL,RCF կամ դրանց համարժեք որակի արտադրողների բարձրախոսների համակարգերը:

Գլխավոր բարձրախոսային համակարգ(main speakers)

Համակարգը պետք է լինի. ստերեո (Left / Right) կոնֆիգուրացիայով
նախատեսված 500–600 հանդիսատես ունեցող փակ տարածքների համար:

Բաղկացած բարձր և ցածր հաճախականության բարձրախոսներից: Ցածր հաճախականության բարձրախոսը LINE ARRAY դեպքում առնվազն –8",POINT SOURCE դեպքում առնվազն –12": Հաճախականության հնարավորությունը 60 - 18000 HZ ± 3dBa: Առավելագույն ձայնային ճնշումը ոչ պակաս 135dba SPL - 1m:

Սաբվուֆերների համակարգ(Subwoofer)

Համակարգը պետք է կազմված լինի ցածր հաճախականությամբ բարձրախոսներից– առնվազն 15": Ամեն կողմում առնվազն 5 kW: Հաճախականության հնարավորությունը 30-80HZ:

Հնչյունային մոնիտորներ (կատարողների համար նախատեսված բարձրախոսներ)

Բեմին դրվող–2 հատ, 1,5m բարձրության հնարավորությամբ հենակների վրա դրվող – 4 հատ մոնիտորներ երաժիշտների համար 500 – 700W հզորությամբ, առնվազն 12", ձայնի ճնշում առնվազն 120dBa: Հաճախականության հնարավորությունը 60 - 18000 HZ ± 3dBa:

Կառավարող վահանակի համակարգ (Digital Console)–1 հատ
Թվային 32 մուտք - 16 ելք 96khz:
Stagebox 32 մուտք 16 ելք,առնվազն 50 մետր

Խոսափողի հենակ
փոքր(short boom)–4 հատ,մեծ(long boom)-28 հատ

Նոտայի հենակ լույսով 26 հատ

Խոսափողներ

Դինամիկ խոսափող երաժշտական գործիքների համար 40-15000hg, 56dbV/Pa 1kHz, MAX SPL 160db - 1000hg, 3 pin XLR ելքով –26 հատ

Վոկալ խոսափողներից բաղկացած անլար համակարգ դինամիկ կապսուլով, սուպերկարդիոիդ, 50-16կհց, (500-600hz RF), 30m և ավելի անխափան կապի միջակայք ապահովող – 4 հատ :

Անլար խոսափողները պետք է ապահոված լինեն որակյալ, երկար աշխատանք ապահովող մարտկոցներով:

**Չափաբաժին 4**

2026 թվականի հունիսի 26–ին ժամը 19–00 , ք. Բերդավան, փողոց 2, շենք 1 հասցեում գտնվող Բերդավան համայնքի Գեղագիտական կենտրոնում և 2026 թվականի հունիսի 27–ին ժամը 19–00 , ք. Մարտունի, Մյասնիկյան 23 հասցեում գտնվող Մարտունի համայնքի Մշակույթի տանը Հայկական Ռադիոյի 100 ամյակին նվիրված միջոցառումների շրջանակում կայանալիք Սայաթ-Նովա աշուղական երգի վաստակավոր անսամբլի համերգներ համար անհրաժեշտ հնչյունային և հարակից տեխնիկայի վարձակալում:Ծառայությունն իր մեջ ներառում է նաև վարձակալվող տեխնիկայի տեղափոխում ք.Բերդավան, փողոց 2, շենք 1 հասցեում գտնվող Բերդավան համայնքի Գեղագիտական կենտրոնի բեմ և ք. Մարտունի, Մյասնիկյան 23 հասցեում գտնվող Մարտունի համայնքի Մշակույթի տան բեմ :Տեխնիկան անհրաժեշտ է Բերդավան համայնքի Գեղագիտական կենտրոնի համերգասրահ մատակարարել 26.06.2026 ժամը 11:00-ից ոչ ուշ և Մարտունի համայնքի Մշակույթի տան համերգասրահ 27.06.2026 ժամը 11:00-ից ոչ ուշ :Մատակարարի տեխնիկական անձնակազմը պետք է կազմված առնվազն 3 տեխնիկական աշխատակցից, որոնք պարտավոր են Հանրային Ռադիոյի տեխնիկական մասնագետների ղեկավարությամբ իրականացնել հնչյունային սարքավորումների և հարակից պարագաների մոնտաժային և տեղադրման աշխատանքներ համաձայն նախապես տրամադրված նախագծի(set up) և իրականացնել փորձ–ստուգման(soundcheck) աշխատանքներ: Մատակարարը պատասխանատվություն է կրում տեխնիկայի անխափան աշխատանքի և սարքինության համար:Հնչյունային և հարակից տեխնիկայի մոնտաժային աշխատանքները պետք է ավարտվեն մինչև մատակարարվող օրվա ժամը 14:00: Վարձակալվող տեխնիկայի ապամոնտաժման աշխատանքները մատակարարի կողմից կարող են կատարվել վերը նշված համերգների ավարտից հետո:

Ստորև ներկայացվում է անհրաժեշտ վարձակալվող հնչյունային տեխնիկայի ցանկը Հանրային Ռադիոյի Սայաթ Նովա աշուղական երգի վաստակավոր անսամբլի կողմից իրականացվող առնվազն 2 ժամ տևողությամբ 2 համերգային ծրագրերի իրականացման համար:

Յուրաքանչյուր համերգի համար անհրաժեշտ հնչյունային սարքավորումների համակարգ,ցանկ
Տվյալ համակարգը և ցանկը մշակվել և կազմվել է հաշվի առնելով Հանրային Ռադիոյի Սայաթ Նովա աշուղական երգի վաստակավոր անսամբլի կազմի և դասավորվածության առանձնահատկությունները,Բերդավան համայնքի Գեղագիտական կենտրոնի և Մարտունի համայնքի Մշակույթի տան համերգասրահների ակուստիկ յուրահատկությունները:

Հնչյունային ուժեղացման համակարգը նախատեսված է ապահովելու կենդանի երաժշտության բարձրորակ վերարտադրում, հավասար ձայնային ծածկույթ ամբողջ հանդիսատեսի տիրույթով, ցածր աղավաղում և բարձր դինամիկ միջակայք:
Համակարգը պետք է ապահովի հանդիսատեսի տարածքում՝ առնվազն 95 dBa SPL շարունակական մակարդակ, առնվազն 105 dBa SPL պիկ մակարդակ:
Համակարգը պետք է ունենա առնվազն 10 dBa դինամիկ պահեստային միջակայք(headroom): Գլխավոր բարձրախոսները պետք է ունենան նվազագույն ճնշման հնարավորություն՝ 135 dBa SPL պիկ մակարդակ – 1W/1m:
Համերգը պատշաճ մակարդակով անցկացնելու համար անհրաժեշտ է ապահովել պրոֆեսիոնալ,որակյալ հնչյունային բարձրախոսների ,սաբվուֆերների և մոնիտորների համակարգեր, ինչպիսիք են Meyer Sound, D&B,

Acoustic, Adamson Systems, JBL,RCF կամ դրանց համարժեք որակի արտադրողների բարձրախոսների համակարգերը:

Գլխավոր բարձրախոսային համակարգ(main speakers)

Համակարգը պետք է լինի. ստերեո (Left / Right) կոնֆիգուրացիայով
նախատեսված 500–600 հանդիսատես ունեցող փակ տարածքների համար:

Բաղկացած բարձր և ցածր հաճախականության բարձրախոսներից: Ցածր հաճախականության բարձրախոսը LINE ARRAY դեպքում առնվազն–8",POINT SOURCE դեպքում առնվազն–12": Հաճախականության հնարավորությունը 60 - 18000 HZ ± 3dBa: Առավելագույն ձայնային ճնշումը ոչ պակաս 135dba SPL - 1m:

Սաբվուֆերների համակարգ(Subwoofer)
Համակարգը պետք է կազմված լինի ցածր հաճախականությամբ բարձրախոսներից– առնվազն 15": Ամեն կողմում առնվազն 5 kW: Հաճախականության հնարավորությունը 30-80HZ:

Հնչյունային մոնիտորներ (կատարողների համար նախատեսված բարձրախոսներ)

Բեմին դրվող մոնիտորներ երաժիշտների համար 500 –700W հզորությամբ, առնվազն 12", ձայնի ճնշում առնվազն 120 dBa: Հաճախականության հնարավորությունը 60 - 18000 HZ ± 3dBa – 8 հատ:

Կառավարող վահանակի համակարգ (Digital Console)–1 հատ
Թվային 32 մուտք - 16 ելք 96khz:
Stagebox 32 մուտք 16 ելք, առնվազն 50 մետր

Խոսափողի հենակ
փոքր(short boom)–10 հատ,մեծ (long boom)-12 հատ

Նոտայի հենակ լույսով 26 հատ
Խոսափողներ
Դինամիկ խոսափող երաժշտական գործիքների համար 40-15000hg, 56dbV/Pa 1kHz, MAX SPL 160db - 1000hg, 3 pin XLR ելքով –10 հատ
Կոնդենսատոր միկրաֆոնների փոքր դիաֆրագմայով 20-20000hg, 15 mV/Pa ± 1 dB 1Khz Max SPL 138 db, 3 pin XLR ելքով – 6 հատ
Վոկալ խոսափողներից բաղկացած անլար համակարգ դինամիկ կապսուլով, սուպերկարդիոիդ, 50-16կhg, (500-600hz RF), 30m և ավելի անխափան կապի միջակայք ապահովող – 4 հատ :
Անլար խոսափողները պետք է ապահոված լինեն որակյալ, երկար աշխատանք ապահովող մարտկոցներով:

** Ծառայությունների մատուցման ժամկետը, իսկ փուլային ձևով պայմանագրի կատարման դեպքում՝ առաջին փուլի ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ծառայությունները մատուցել ավելի կարճ ժամկետում*

*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկը սահմանվում է օրացուցային օրերով՝ հաշվարկն իրականացնելով ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից:*

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| Հայաստանի հանրային ռադիոընկերություն ՓԲԸ | <<ՆԱԱՄԱ>> ՍՊԸ |
| ՀՎՀՀ 01541435 | ք.Երևան, Չեռնիշևսկի 60 |
| ք. Երևան, Ալեք Մանուկյան 5 | «Էվոկաբանկ» ԲԲԸ |
| Ֆասթ Բանկ ՓԲԸ | Հ/Հ՝ 1660030202690800 |
| h/h 2620677354861001 | ՀՎՀՀ՝ 01055401 |
| Գործադիր տնօրեն՝ Արմեն Քոլոյան | Տնօրեն՝ Ա. Հովհաննիսյան |
| ------------------------------- | ------------------------------- |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |

*Հավելված N 2*
*« 15 » ապրիլ 2026 թ. կնքված*
*ՀՀՌ-ԳՀԾՁԲ-26/04 ծածկագրով պայմանագրի*

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը` ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026 թ-ին` ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | |
| | | | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 92151300/4 | սարքավորումների վարձակալության ծառայություններ | 0 | 0 | 0 | 1 710 000 | 1 710 000 | 1 710 000 | 1 710 000 | 1 710 000 | 1 710 000 | 1 710 000 |
| 2 | 92151300/5 | սարքավորումների վարձակալության ծառայություններ | 0 | 0 | 0 | 2 470 000 | 2 470 000 | 2 470 000 | 2 470 000 | 2 470 000 | 2 470 000 | 2 470 000 |
| 3 | 92151300/6 | սարքավորումների վարձակալության ծառայություններ | 0 | 0 | 0 | 1 710 000 | 1 710 000 | 1 710 000 | 1 710 000 | 1 710 000 | 1 710 000 | 1 710 000 |
| 4 | 92151300/7 | սարքավորումների վարձակալության ծառայություններ | 0 | 0 | 0 | 1 710 000 | 1 710 000 | 1 710 000 | 1 710 000 | 1 710 000 | 1 710 000 | 1 710 000 |

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ` որպես դրա անբաժանելի մաս:*
*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Հայաստանի հանրային ռադիոընկերություն
ՓԲԸ
ՀՎՀՀ 01541435
ք. Երևան, Ալեք Մանուկյան 5
Ֆասթ Բանկ ՓԲԸ
h/h 2620677354861001
Գործադիր տնօրեն` Արմեն Քոլոյան

-----------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

<<ՆԱԱՄԱ>> ՍՊԸ
ք.Երևան, Չեռնիշևսկի 60
«Էվոկաբանկ» ԲԲԸ
Հ/Հ` 1660030202690800
ՀՎՀՀ` 01055401

Տնօրեն` Ա. [illegible]

-----------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

*Հավելված 3*
*«    »        20  թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ

______________________________

______________________________

գտնվելու վայրը ______________

հհ ________________________

հվհհ ______________________

Պատվիրատու

______________________________

______________________________

գտնվելու վայրը ______________

հհ________________________

հվհհ______________________

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
# ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*«    »«        » 20   թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

______________________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____»«_________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «    » «          » 20   թ. դուրս գրված N___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

______________________________
ստորագրություն

______________________________
ազգանուն, անուն

Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

______________________________
ստորագրություն

______________________________
ազգանուն, անուն

Կ.Տ.

*Հավելված 3.1*
*«     »          20  թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _______________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ____________-ի
Պատվիրատուի անունը                                                Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20    թ. ___________________-ին կնքված N___________________
պայմանագրի կնքման ամսաթիվը                                  պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ____________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

_________________________
ազգանուն, անուն

_________________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_________________________
ազգանուն, անուն

_________________________
ստորագրություն